Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 01.03.2021թ. թիվ 2112347288 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 03 2021թ. 7-13- 5002 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Արամ Ղևոնդյանի ՄԴ/24042-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Չարենցի փողոցի 27ա շենքի 18 բնակարանի բնակիչ Արամ Ղևոնդյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 01.03.2021թ. թիվ 2112347288 որոշումը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 40-րդ կետի համաձայն՝ շրջադարձից կամ հետադարձից առաջ վարորդը պետք է նախապես զբաղեցնի երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապատասխան եզրային գոտին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկությունն սկսելու կամ մանևր կատարելու, ինչպես նաև հետընթաց վարման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութից հստակ երևում է, որ դիմումատուի կողմից վարած տրանսպորտային միջոցը 10.02.2021թ-ին, ժամը՝ 16:27-ին Երևան քաղաքի Թումանյան - Կողբացի փողոցների խաչմերուկի հատվածում ձախ շրջադարձը կատարել է ձախ եզրային չհանդիսացող գոտուց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 38-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ, 19-րդ կամ 30-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 01.03.2021թ. թիվ 2112347288 որոշման հիմքում դրված իրավախախտումն ամրագրած տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունից հստակ երևում է, որ դիմումատուին պատկանող <<MERCEDES>> մակնիշի 89 UU 573 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 10.02.2021թ-ին, ժամը՝ 16:27-ին Երևան քաղաքի Թումանյան - Կողբացի փողոցների խաչմերուկի հատվածում ձախ շրջադարձը կատարել է ձախ եզրային չհանդիսացող գոտուց և խոչընդոտ հանդիսացել երթևեկության մյուս մասնակիցների համար:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 9-րդ մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 01.03.2021թ. թիվ 2112347288 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արամ Ղևոնդյանին :

Ե. Կարապետյան

Կատարող՝ Ա. Ալեքսանյան
Հեռ. 011-54-47-83